ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕԾՄԱՆ ՏԱՍՆԵՄԻԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

Սեպտեմբերի 26 ին, Վարագայ խաչի տօնին, Թիֆլիսի Վանքի ս. եկեղեցում կատարուեցաւ ամենայն Հայոց Վեհ. կաթուղիկոսի օծման 11-դ տարեդարձը ամենամեծ շքով։ Մաղթանքին ներկայ էր Թիֆլիսի ամբողջ հոգևորականութիւնը, ուսանող սերունդը և խուռն բազմութիւն ժողովրդեան։ Այդ օրը Վեհափառին առաքուեցան բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։

ԿԻԼԻԿԻՈՅ Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՑՑԸ Կ. ՊՕԼԻՍ

Կ. Պոլսից գրում են մեզ, որ սեպտեմբեր ամսին Կ. Պոլիս է ժամանել Կիլիկիոյ ամենապատիւ Տ. Սահակ կաթուղիկոս Խապայեանը և ընդունուել է Հայրապետական մեծ և արտակարգ շքով թէ Ամենապատիւ Ս. Պատրիարքի, թէ ամբողջ ազգայինների և թէ կառավարութեան կողմից։

Պ. Կ. ԵԶԵԱՆԻ ՑԻՍՆԱՄԵԱԿ

«Լումայի» վերջին թերթը մամուլի տակ էր, երբ կարդացինք Պ. Բուրգից տեղւոյս ռուս լրագիրներին ուղղած հետեւեալ հեռագիրը.

«Պ. Կարապետ Ցարութիւնեան Եզեանցին յարգողների խումբը յայտարարում է, որ նոյեմբերի 6-ին լրանում է նորա պետական ծառայութեան յիսնամեակը և